Արձանագրություն N 2

ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար ցուցանակների և հարակից առարկաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Ց-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

27 դեկտեմբերի 2023թ.
ժամը՝ 11:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Թումանյան, Գ. Սեփոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Ցուցանակներ և հարակից առարկաներ /Մեծ ցուցանակներ/	264 000
2	Ցուցանակներ և հարակից առարկաներ /Փոքր ցուցանակներ/	1 000 000
3	Ցուցանակներ և հարակից առարկաներ /Փոքր ցուցանակներ/	380 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.12.2023թ.-ին ժամը 14:30-ին: Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 26.12.2023թ.-ին ժամը 14.30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Չ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1, 2, 3	«Էյչ Բի Էն» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01848129, Շերամի փ. շ.51, բն.49, Երևան 0084, հեռ. 077-00-01-94, hbnprint@gmail.com
2, 3	Աննա Սահակյան ԱՁ	ՀՎՀՀ՝ 25405638, ք. Երևան, Քանաքեռ, Ֆանարջյան 37, հեռ. 077-44-77-54, atsgnumner@gmail.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Ց-24/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Ցուցանակներ և հարակից առարկաներ /Մեծ ցուցանակներ/	Էյչ Բի Էն ՍՊԸ	264 000	300 000	0 %	300 000	264 000	0 %	264 000.00
2	Ցուցանակներ և հարակից առարկաներ /Փոքր ցուցանակներ/	Էյչ Բի Էն ՍՊԸ	1 000 000	1 250 000	0 %	1 250 000	700 000	0 %	700 000.00
		Աննա Սահակյան ԱՁ		999 750	0 %	999 750	890 000	0 %	890 000.00
3	Ցուցանակներ և հարակից առարկաներ /Փոքր ցուցանակներ/	Աննա Սահակյան ԱՁ	380 000	379 800	0 %	379 800	283 000	0 %	283 000.00
		Էյչ Բի Էն ՍՊԸ		500 000	0 %	500 000	290 000	0 %	290 000.00

Աճուրդն ամփոփվել է 26.12.2023թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Էյչ Բի Էն ՍՊԸ**-ն:
- 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Աննա Սահակյան ԱՁ**-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Էյչ Բի Էն ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները:
- Ներկայացված Հավելված 1.3-ում իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումը ճիշտ նշված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Ց-24/1** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 28.12.2023թ.-ին Համակարգի միջոցով ծանուցել **Էյչ Բի Էն ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 04.01.2024թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. 04.01.2024թ. ժամը 10:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 04.01.2024թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **Էյչ Բի Էն ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում ներկայացրել են շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **Էյչ Բի Էն ՍՊԸ**-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:
2. **Աննա Սահակյան ԱՁ**-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

05.01.2024թ. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Էյչ Բի Էն ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:
- 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Աննա Սահակյան ԱՁ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով անգործության ժամկետ չի կիրառվում:

10.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.5 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Աննա Թումանյան

_____ Սիլվա Գարանյան

_____ Գևորգ Սեփոյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան